հակառակն բոլոր արդարութեան համար հալածուածներին և դատապարտուածներին այն միջոցներին վստահութիւնը ներշնչելու, որ նոցա դատը աւելի բարձր մի ատեանի առաջ պէտք է վճռուի, քան ներկայ դատաւորներն են։

Բարկէն։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ։

ԿԱԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՑԻ

— Հռովմայ պապի, Լևոն ԺԳ-ի, առողջութեան մասին տարածուած անպատշաճ լուրերն ստուգուում են։ Խորին ծերութեան հասած քահանայապետն հետզհետէ ուժասպառ է լինում, այս ամսուան ընթացքում տեղի ունեցած Կոնսիստորիումի ժամանակ պապին պատգարակով են ներս բերել։ Մարմնի տկարութիւնը սակայն ոչ մի կերպ չէ նուազեցրել Հռովմի քահանայապետի հոգեկան եռանդը. այդ եկեղեցական համագումարի մէջ նա կրկին ցոյց է տուել իւր անշեղ ընթացքն ու գործունէութեան ոյժը։ Պապն առիթ առնելով ներկայ քաղաքական անցքերից, խօսել է և հայկական խնդրի մասին։ Նա ցաւ է յայտնել քրիստոնէից հալածանքի վերաբերութեամբ և խոստացել է օգնութիւն հասցնել կոտորածներից ազատուած հայերին։ Տաճկաստանի տառապեալ հայերի համար ի հարկ է թանգ արժէ այժմ ամէն մի քրիստոնէական օժանդակութիւն և երանի՜ թէ այս անգամ պապական օգնութիւնը զուտ քրիստոնէական լինի և ոչ՝ ըստ սովորութեան հռովմէական եկեղեցու շահագիտական։ Ցոյս ունինք՝ որ քրիստոնեայ աշխարհը իւր օգնութիւնն այս նուագ գոնէ փոխարինարար չի անել և ձեռք կը քաշի տառապեալ ժողովրդին հաւատափոխութեան գնով օգնութիւն հասցնելուց։

Լևոն ԺԳ. մի այլ նշանաւոր յայտարարութիւն ևս արել է, այն է՝ որ ինքը վերականգնում է Ալէքսանդրիոյ պատրիարքութիւնն Ղպտիների համար։ Այս հանդիսաւոր ժողովից յետոյ պապը 24 նոր եպիսկոպոսներ է ձեռնադրել և մի քանի եպիսկոպոսների ևս կարգինալութիւն է տուել։

— Ս. Գրքերի ֆրանսերէն թարգմանութեան վերաբերութեան գործն յառաջադիմում է հետզհետէ։ Նոր Կտակարանի վերստուգութիւնն արդէն իսկ աւարտուած է, իսկ Հին Կտակարանի վերաբերութեամբ յանձնարարուած է շատ հմուտ ուսուցիչների և հոգևորականների, որ իրենց նկատողութիւններն հաղորդեն սինոդական յանձնախմբին։ Յոյս կայ, որ բոլոր գործն աւարտի մինչև 1896 թուին։

— Կիրակնօրեայ հանգստութեան խնդիրն Իտալիայում դեռ ևս յարուցուած չէ։ Ինչպէս հռովմէական կայսրութեան օրերում, այնպէս էլ այժմ Իտալիոյ քաղաքներում կիւրակին հասարակ օրուանից չէ զանազանուում, որովհետև ժողովուրդը միակերպ աշխատում է թէ կիւրակի և թէ հասարակ օրերին։ Այս չարիքի առաջը ոչ կաթոլիկ եկեղեցին է առել և ոչ էլ երկրի օրէնսդրութիւնը. այժմ հիւսիսային Իտալիայում ձայներ են լսուում կիւրակին սրբութեամբ պահելու մասին, որ երևի շուտով արձագանգ կը դտնի թէ եկեղեցական և թէ աշխարհական շրջաններում։

— Այս տարի յունիս ամսին Վեստմինստրում հիմք ձգուեցաւ կաթոլիկաց մայր եկեղեցու։ Սա պիտի լինի Անգլիոյ մեծագոյն եկեղեցին։ Եկեղեցու միջին նաւի տարածութիւնը պիտի լինի 13,800 քառակուսի ոտնաչափ, իսկ բոլոր շէնքը պիտի բռնէ 54,000 քառակուսի ոտնաչափ։ Եկեղեցին շինուում է բազելիկի ձևով, որովհետև գոթական ոճով շինելու համար շատ մեծ ծախք է պահանջուում։ Շէնքը պիտի աւարտուի երեք տարուան ընթացքում։

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

1. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ.

— Տիեզերական պատրիարքը մի շրջաբերական կոնդակով պատասխան է տուել Հռովմի պապի միութեան հրաւէրին։ Այս շրջաբերականը, որի բառացի թարգմանութիւնը տպագրուած է ռուսաց «Եկեղեց. Համբաւաբերում» (№ 44 և 45) հերքում է պապի պատմական և դաւանական պատճառաբանութիւններն։ Եթէ «Արարատ»ի նեղ էջերը թոյլ տան, մենք այդ կոնդակից կը հրատարակենք քաղուածօրէն գլխաւոր կէտերը։

— Տաճկաց կառավարութիւնը գոհ չը լինելով Կ. Պոլսի յունաց պատրիարքի չէզոք դրութիւնից հայերի վերաբերութեամբ, առաջարկութիւն է արել Անթիմոս պատրիարքին, որ գոհունակութիւն յայտնէ Սուլթանի կառավարութիւնից և դրուատելով գաւառների բարօրութիւնը, հերքէ բարենորոգմանց կարևորութիւնը։ Պատրիարքական խորհուրդն այդ առաջարկը մերժել է, աչքի առաջ ունենալով, որ Անատոլուի անկարգութիւնների մէջ և յոյներն էլ մեծամեծ վնասներ են կրել։

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ.

— Երուսաղէմի յունաց պատրիարքարանից և յոյն եկեղեցականներից սաստիկ դժգոհ է ռուսաց հոգևորականութիւնը։ Այս օրերս լոյս է տեսել ռուսաց Պորփիւր եպիսկոպոսի յիշատակարանի երկրորդ հատորը, ուր նկարագրուած է յոյն եկեղեցականների ընկած վիճակը դեռ 40-ական թուականներում։ «Եկեղեցական Համբաւաբերը» համեմատելով այդ նախկին վիճակը այժմեանի հետ, ոչ մի փոփոխութիւն չէ տեսնում։ Նորագոյն տեղեկութիւնները հիմնուած են ռուսաց «Պաղէստինեան ընկերութեան» զեկուցումների վրայ։ Գիւղական եկեղեցիների վիճակն աննկարագրելի է, գրանք ամենևին սրբավայրի նման չեն, հին տաճարները պահուում են անշուք վիճակի մէջ։ Հոգևորականների վարքը շատ վատ գոյներով է նկարագրած, նրանք շահասէր են և թաղուած են զգայական և անմաքուր կեանքի տղմի մէջ։ Եկեղեցական գործերի մէջ մեծ նշանակութիւն ունին՝ բարձրագոյն հոգևորականների «գերոնդիսներն» և «վոկոն»ները։ . . .

Ռուսները դժգոհ են նաև յոյն եկեղեցականների յարաբերութիւնից իրենց հետ։ Զը նայելով՝ որ նրանք ապրում են ռուս ուխտաւորների նուէրներով, սակայն առիթ չեն փախցնում ծաղրելու այդ ջերմեռանդ քրիստոնէից պարզամտութիւնը։ Երուսաղէմի պատրիարքը վերջերս վիրաւորել է բարեպաշտ ռուսների ազգային զգացումներն այնու, որ խանգարել է ի յիշատակ հանգուցեալ Կայսեր մի մատուռ կառուցանելը։ Ցամենայն դէպս երկու հաւատակից և դաւանակից ազգերի յարաբերութիւնները Ս. երկրում շատ հեռի են եղբայրական լինելուց։

2. ՌՈՒՍԱՑ ՆՈՒՆՇԵՑԻ.

— Ռուսաց եկեղեցին մեծահանդէս տօն կատարեց ամենուրեք և գոհաբանական մաղթանքներ առաքեց առ Բարձրեալն Նորին Կայս. Մեծ. Օլգա Նիկոլայեվնայի ծննդեան առթիւ, որ տեղի էր ունեցել ամսոյս 3-ին։

— Ռուս աղանդաւորների վերաբերութեամբ ուղղափառ հոգևորականների բռնելիք ընթացքի մասին նորանոր բացատրութիւններ են տրուում հետզհետէ։ Այսպէս Սամարայի թեմական վարչութիւն արգելել է քահանաներին Խլիստ կոչուող աղանդաւորներին եկեղեցական կարգով թաղելու։ Աղանդաւորներին իրաւունք չը կայ թաղելու ուղղափառների գերեզմանոցներում։ Նրանք պիտի թաղուեն աղանդաւորների համար որոշուած յատուկ գերեզմանատներում։ Խիստ միջոցների ձեռնարկութիւնն հաւանութիւն է գտնում այն պատճառով, որ մի քանի թեմերում աղանդաւորները թէ բազմանում են և թէ համարձակութիւն են ստանում։ Աղանդների տարածման նպաստում է ռուսական շատ գիւղերի ցրուած լինելը, որովհետև խուլ անկիւններում քահանայք հնար չունեն աղանդաւոր քարոզութեան առաջն առնելու։

— Եկեղեցական—ծխական դպրոցների պաշտպաններից ոմանք մի մեծ առաւելութիւն ևս գտել են կրթութեան այդ ձևը պաշտպանելու համար։

Յայտնի է, որ կրթութիւնը բաւական թանգ է նստում։ Նոյն իսկ ժողովրդական դպրոցներն երբեմն այնքան ծախք են պահանջում, որ ժողովուրդը չէ կարողանում հայթհայթել։ Եկեղեցական դպրոցները ամենաքիչ ծախքն ունին, որովհետև շատ տեղ նրանք միայն գրագիտութեան դպրոցներ են, և ժողովրդի մեծաքանակ բազմութիւնը լոյսից չը զրկելու համար առաջարկում են հետևել եկեղեցական—ծխական դպրոցների ընթացքին և էժան դպրոցներ պահել։ Բայց ո՞րքան արգասաւոր է որ և է ժամանակին դպրոց, ահա գլխաւոր խնդիրը. կըրթութեան համար որքա՞ն աւելի արժէ՝ թէ քանակը։

— Ռուսաց եկեղեցական թերթերը շարունակում են հոգևոր գրաքննութիւն պահանջել աշխարհական հրատարակութիւնների համար. աշխարհական գրաքննիչներից նրանք գոհ չեն։ Հոգևոր գրաքննութիւն է պահանջուում գլխաւորապէս աշխարհական թերթերի մէջ հրատարակուող եկեղեցական պատկերների համար։

— Եկեղեցիների միութեան խնդիրը բազմատեսակ ձևեր է ստանում։ Մի քանի անգլիացիք առաջարկում են միանալ ոչ թէ պապական եկեղեցու հետ, այլ օրթոդոքս—ռուսականի։ Այդ վերաբերութեամբ առանձին ճիգեր է թափում դոկտոր Բիրկբէկը, որ ռուսաց եկեղեցին ճանաչող հեղինակութիւններից մէկն է Անգլիայում։ Վերջին ժամանակներս ռուսաց Նիկոլայոս եպիսկոպոսը, որ Ալէուտի առաջնորդն է, Լոնդոնում եպիսկոպոսական երկու պատարագ է մատուցել, որ առանձին տպաւորութիւն է գործել ներկայ եղող անգլիացոց վրայ։

—Ռուսաց «Եկեղեց. Համբաւաբերը» իւր № 45-ի մէջ առաջ է բերում այն ձևական յարաբերութիւնների նկարագիրը, որ տեղի է ունենում Կ. Պոլսում հայոց և յունաց պատրիարքների միմեանց այցելելու ժամանակ։ Այդ նկարագիրը թարգմանուած է տիեզերական պատրիարքի բերան ծառայող «Էկկլէզիաստիկէ Ալէթիայա» թերթի այս տարուան № 51-ից, ուր նկարագրուած է Ամեն. Մատթէոս պատրիարքի ընդունելութիւնը յունաց

պատրիարքարանում և յունաց պատրիարքինը Գումգափուի պատրիարքարանում։ Ռուս թերթն այս նկարագիրը տպագրում է իբրև մի օրինակ, թէ ի՞նչպէս պէտք է ընդունուի Ամենայն Հայոց Կաթուղիկոսը ռուսաց հոգևորականութեան կողմից, սակայն մոռանում է, որ երկու պատրիարքները Կ. Պոլսում պատուակից և պաշտօնակից են, մինչ Ամենայն Հայոց Կաթուղիկոսը երկուսից էլ վեր է պաշտօնով։

— Նոյն թերթը խօսելով տաճկահայոց կրած հալածանքների և այն սոսկալի կոտորածների մասին, որ տեղի են ունենում Փոքր Ասիայում, մատնանիշ է անում իւր համար 39-ում տպագրուած յօդուածի վրայ և յայտնում է, որ այդ ամէնն ապացուցանում է՝ թէ «Տաճկաստանը իբրև մի անբնական քաղաքական կազմած դիմում է ակներև դէպի իւր լուծումն»։

— Ռուսաց ս. Սինոդին կից մի նոր վարչական ճիւղ է բացուել, որ պիտի հսկէ աղանդների շարժման վրայ, այդ ճիւղի կառավարիչ է նշանակուած Վ. Վ. Սկուարցովը, որ մի ժամանակ Շտունդիզմը բառնալու գործին ղեկավար էր կարգուած հարաւ արևմտեան Ռուսիայում։

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Անգլիկան եկեղեցու երեսունևութերորդ ժողովի զբաղումների մասին հետզհետէ ղեկուցումներ են հրատարակում պարբերական թերթերը։ Նորվիչում տեղի ունեցած այդ ժողովի մի քանի խնդիրների մասին արդէն խօսել ենք «Արարատի» նախընթաց համարում։ Յառաջ ենք բերում արդ և մի քանի այլ խնդիրներ, որոնցով զբաղուելու է այդ նշանաւոր ժողովը։ Հոկտեմբերի 9-ին (ն. տ.) ուսուցչապետ Ռորինզոնը խօսել է հին եկեղեցու, Նորա պաշտօնէից և աստուածպաշտութեան մասին, հիմնուելով նորագոյն հետազօտութիւնների վրայ։ Այս բանախօսութեան մէջ առանձնապէս հետաքրքրական են «քրիստոնէական մարգարէութեան» մասին տրուած տեղեկութիւնները։ Եկեղեցին իւր զարգացման առաջին շրջաններում ունեցել է և իւր մարգարէները, որոնք տարբեր էին եկեղեցու պաշտօնէութիւնից, սակայն երբ քրիստոնէութիւնը յաղթանակ տանելով՝ կազմակերպութեան կարիք զգացուել է, վերացել է մարգարէութիւնն և տեղի տուել նուիրապետական պաշտօնէութեան։

Նոյն օրը Բարրի եպիսկոպոսը խօսել է «դիտութեան և հաւատոյ» մասին, մատնանիշ անելով մեր ժամանակի ձգտումն կապ գտնելու «բնականի ու գերբնականի» մէջ։

Ցաջորդ օրերի ժողովներում առանձին ուռանդով քննուել է եկեղեցիների միութեան խնդիրը։ Ահա այն գլխաւոր կէտերն այդ խնդրի, որոնց մասին խօսուած է. 1) միութեան արգելքները, 2) հռովմէական եկեղեցի, 3) արևելեան եկեղեցիք։ Վիճաբանութիւնները խիստ ընդարձակ և բազմակողմանի էին, այս մասին խնդիրը փակելով նախագահող եպիսկոպոսն ասաց. առ այժմ ցանկալի է, որ բոլոր եկեղեցականների և աշխարհականների ճիգերն ուղղուած լինին դէպի սուրբ գործն, մինչև որ Էկը Տէրը մի արտաքին միութեան նշան էս կառաքէ։ Արևելեան եկեղեցու հետ միանալու խնդրի գլխաւոր պաշտպանն էր դոկտոր Բիրկբէկը, որի ընդդէմ արժանապատիւ Մայերիին առարկելով այն արգելքները ցոյց տուաւ, որ այդ միութեան խանգարում են։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՍԱՆԵԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆ.

Թ. ՆԻՕԼԴԷՔԷԻ.

(Շարունակութիւն)*

Յազկերտ Բ.-ի մահուանից (457-ին) անմիջապէս յետոյ, ինչպէս երևում է, երկպառակութիւն է ընկնում նրա երկու որդոց մէջ, Սագաստանի Որմիզդ Գ. Թագաւորի (այսինքն՝ «արքայորդի - կուսակալի») և Պերոզի, որոնք երկուսն էլ Դինակ անունով նոյն մօրից էին։ 1

Որմիզդը, Յազկերտի աւագ որդին, մի առ ժամանակ դէմ դրաւ իր եղբօրը, բայց Հեփթաղների օժանդակութեամբ և Միհրանեան աւագագոյն տոհմից Ռահամի ջանքով երկու տարուց յետոյ քշեց նրան Պերոզը։ 2 Պերոզը՝ բացի իւր եղբօրից ըս-

* Տես. Ararat համար Գ. եր. 385 – 388։

1. Պատահաբար պահուած է այս կնոջ պատկերը մի գոհարի (Gemme) վրայ, տես B. Dorn, „Versuch einer Erklärung der auf einer Gemme im Besitz des grafen S. Strogonov befindlichen Pehlevy—Inschrift (compte—rendu de la commission Imp. arch. pour 1878 et 1879, 162 tf).

2. Տես Ղազար (1893) յեղ. Ը. եր. 376. «Իսկ կընտրեսէր որդւոյն Յազկերտի դայեակն, Ռահամ անուն ի Միհրան տոհմէն . . . յարձակեցաւ ի վերայ երէց որդւոյն Թագաւորին, հար սատակեաց զգունդն, եւ ձերբակալ արարեալ զորդի Թագաւորին, անդէն ի տեղւոջն հրամայէր սպանանել։» Հմմ. Ղազար Փարպ. Դրուագ. Գ. պրակ Կ. Ի. 325.

Ծան. Թարգմ.